ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Գոռ Պարգևի Գրիգորյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (01.04.24թ.–31.03.25թ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Անմիջական ղեկավարիս հանձնարարությամբ պատրաստել եմ գրություններ և ուղարկել ՀՀ պետական կառավարման մարմիններին, քաղաքացիներին և այլն,
2. Ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների, առցանց ստացվող հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով հավաքագրվող տեղեկատվությունը ամփոփել և համադրել եմ վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ և արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները ներկայացրել եմ Վարչության պետին,
3. Իրականացրել եմ վերահսկվող օբյեկտների գործունեության և վերջիններիս կողմից պետական միջոցների կառավարման օրինակության և արդյունավետության վերահսկողության նպատակով ուսումնասիրություններ և մշտադիտարկումներ,
4. Մասնակցում եմ ստուգումների իրականացման ոլորտի պետական կառավարման համակարգի մարմիններում ուսումնասիրություններին,
5. Սովորել և օգտվել եմ ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը հասանելի տեղեկատվական համակարգերից,
6. Իրականացրել եմ վերահսկվող (պայթյունավտանգ, հրդեհապայթյունավտանգ նյութեր պահեստներ և արտադրական վտանգավոր օբյեկտներ) օբյեկտների վերաբերյալ տվյալների վերլուծություն,
7. Վարչության պետին ներկայացրել եմ Վարչության առջև դրված նպատակների և գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների նախագծեր,
8. Վերահսկողական աշխատանքների շրջանակներում այցելել եմ համապատասխան պետական կառավարման մարմիններ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության փորձագետ՝ **Գոռ Գրիգորյան**

31.03.2025թ.